

ԻՆՉՈՎ Ե ՈՒԺԵՂ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ



355(47)
9-83

ԽԱՀԱ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ.
ՀՐԱՄԱՆԿՎՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

605 99A E 1

- MAR 2010

355(47)
83

ԶՈՐԻՆ

ԻՆՉՈՎ Ե ՈՒԺԵՂ
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

1003
13347



ԽՍՀՄ ԳՈԼՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՎՈՒՅՑՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1927

3 APR 2013

40800

Թարգմ. I. Գրիգորյան.

41722-68

Главлит № 82433.

Тираж 2,500 экз.

Тип. Госизд. „Красный пролетарий“, Москва, Пименовская, 16.

ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԱՅՆՔԱՆ ԵԼ ՈՒԺԵՂ ԶԵՆ.
ՄԵՆՔ ԱՅՆՔԱՆ ԵԼ ԹՈՒՑԵՂ ԶԵՆՔ.

ՄԵՐ յերկրում շատ սուտ լուրեր են տարածվում կապիտալիստական երկըների զինվորական ուժերի մասին։ Բուրժուական բանակում թշնդանոթներն իբր թե հազարավոր վերստերի վրայեն կրակում, իսկ հսկայական այերոսլաները իբր թե մի ամբողջ զորագունդ կարող են տեղափոխել. քիմյական գազերն ամենակարճ ժամանակամիջոցում իբր թե կարող յեն վոչնչացնել յերկրի վրա ապրող բոլոր կենդանի եյակներին։ Աշխատավորության թշնամիները նման լուրեր են տարածում, վորպեսզի վախեցնեն մեզ, կազմալուծեն մեր շարքերը. կապիտալիստական բանակը պատկերացվում է այնպես, զոր մեր ուժերից իբր թե վեր է նրանց հետ կռվելլ։ Անշուշտ, նման լուրեր տարածելուն նպաստում է մեր անգրագիտությունը։ Սնգրագետ մարդուն ինչ ել զոր ասես, նա կհավատա և դեռ ուրիշ-

Ներին ել կպատմի ամեն տեսակ չեղած բաների
մասին:

Ուրիշ բան ե գըագետ մարդը. նա կարդալով
գիրքն ու լրագիրը՝ կիմանա իրողությունը:

Յեվ իսկապես, ինչպես ժողովրդական առաջն
ե ասում, «սատանան այնքան ել սարսափելի չե,
ինչպես պատկերացնում են նրան»։ Ճիշտ ե,
կապիտալիստական պետություններում տեխնի-
կան շատ բարձր ե, այդ չե կարելի թագցնել,
բայց և այնպես նա այնքան ել սարսափելի չե,
ինչպես յերեխն խոսում են այդ մասին անգամ
այնպիսի մարդիկ, վորոնք տեղյակ չեն զինվո-
րական գործին։

Անշուշտ, թնդանոթներն այժմ կրակում են
ավելի մեծ տարածության վրա, քան 14—18 թ.թ.
պատերազմի ժամանակն եյին կրակում։ Բայց
դեռ շատ հեռու յեն հազար վերստի վրա կրա-
կելուց։

Ողային նավատորմը բավական զարգացել ե:
Առաջներում յեթե կապիտալիստական պետու-
թյունների այերոպանների թիվը տամնյակների
յեր համառում, այժմ հարյուրների և հազարների
յե հասել։ Զարգացել ե և քիմյական արդյունա-
բերությունը, վորը պատրաստում ե թունավորող
նյութեր։

Այս բոլորը միանգամայն ճիշտ են և այս բո-

լորը պետք ե պատմել ամեն մի աշխատավորի,
վորպեսզի նա իմանա, թե ի՞նչպես են զինված
բռւրժուական բանակները։ Բայց վորքան ել
բարձր լինի կապիտալիստական բանակների տեխ-
նիկան, այնուամենայնիվ նա այնքան ել սար-
սափելի չե, ինչպես սիրում են դրա մասին
խոսել «ջուր պղտորողները» կամ այնպիսի
մարդիկ, վորոնք այդ հարցում վոչինչ չեն հաս-
կանում։ Դրա համար ել հարկավոր ե, ինչպես
հարկն ե, գրքերի, լրագրերի և ժուրնալների
միջոցով ծանոթանալ զինվորական գործի կատա-
րելագործմանը։

Անհրաժեշտ ե, վոր մենք իմանանք թե ի՞նչ-
պիսի այերոպալաններ են պատրաստվում, թե
ի՞նչ արագություն ունեն դրանք, ապա պետք ե
ծանոթանալ, թե ի՞նչ թունավոր նյութեր ե
պատրաստում քիմյական արդյունաբերությունը,
ի՞նչ տարածության վրա յե կրակում թշնամու
արտիլերիան։

Մի խոսքով, տեսնելով թե մեր թշնամի կա-
պիտալիստները ի՞նչ միջոցներով են պատրաստ-
վում մեր դեմ կովելու, մենք յերեք յետ չենք
մնա նրանցից։

Ի հարկե, Բանվորա - Գյուղացիական Խշա-
նությունն ևս ունի այերոպաններ, մեծ հե-
ռավորության վրա խփող թնդանոթներ, քիմյա-

կան գաղեր և կովելու մի շաբք այլ տեխնիկա-
կան միջոցներ:

Յեվ մենք ստիպված յենք փողեր ծախսել՝
պատերազմական զենքեր պատրաստելու, տեխ-
նիքական միջոցներ ստեղծելու, վորպեսզի քշենք
թշնամուն յեթե նա փորձեր անի խլելու աշ-
խատավոր գյուղացու հողը, բանվորական պետու-
թյան գործարաններն ու արհեստանոցները:

Յեվ յերբ բոլոր յերկրածերում բանվոր դասա-
կարգը գյուղացիուրյան հետ միասին կտապաղեն
գործարանատերին ու կարիքածառերին—մի-
այն այդ դեպքում բանվոր դասակարգն ու աշ-
խատավորությունը կմոռանան ամեն տեսակ պա-
տերազմի մասին:

Իսկ քանի վոր այդ գեռ չկա և բուրժուա-
զիան գեռ կենդանի յեւուրեմն մենք պետք ե-
արթուն լինենք:

Բայց մի բան չպետք ե մոռանալ—վոր մեր
թշնամիները այնքան ել ուժեղ չեն, ինչպես
այդ կարող ե թվական առաջին հայացքից. իսկ
մենք ել այնքան թույլ չենք, վոր չ'կարողանանք
պաշտպանել մեր պետությունը:

Հիմա տեսնենք թե ինչո՞ւմն ե մեր ուժը. ին-
չո՞ւմն ե Կարմիր Բանակի ուժը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ Ե ՅԵՎ ԶԻՆՎՈ-
ՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Ե ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐՁԻՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ.

Մեր Կարմիր Բանակը կազմակերպվել և զին-
վորական գործը սովորել ե քաղաքացիական
կռիվների դաշտում:

Քաղաքացիական կռիվների այդ խառնակ որե-
րեն ժամանակ չկար կարմիր բանակայինի հետ
պարապելու, նրան սովորեցնելու, վորովհետև
մեր թշնամի կավիտալիստն ու կալվածատերը
կատաղի հարձակումներ եյին գործում մեզ վրա:
Բացի դրանից, Կարմիր Բանակում չկար և զին-
վորական խիստ, հեղափոխական դիսցիպլինա,
ինչպեսին վոր կա ներկա Կարմիր Բանակում:
Զինվորական մասերը գեռ լիովին չկազմակեր-
պած, արդեն կարիք եր լինում նրանց ուղարկե-
լու սպիտակ-գվարդեյականների գեմ կռվելու. և
վերջապես քաղաքացիական կռիվների այդ շըր-
ջանում մենք չունեյինք զինվորական գործը
լավ ուսումնասիրած բանվորա - գյուղացիական
հրամանատարական կազմ և ժամանակ ել չու-
նեյինք հրամանատարներ պատրաստելու: Իսկ
Կարմիր Բանակի դիմաց կանգնած եյին զինվո-

բական գործը լավ յուրացրած սպիտակ - դվար-
դեյականների բանակներ, վորոնց հրամանատար-
ները զինվորական բարձրագույն կրթություն
ստացած գեներալներ ու գնդապետներ են:
Մյուս կողմից, ոտարերկրյա կապիտալիստները
ամեն կերպ ոգնության եյին գալիս սպիտակ
դվարդեյականներին՝ այերոպլաններով, թնդա-
նոթներով, տանկաներով, ռազմամթերքով, հա-
գուստներով և փողով: Բայց և այնպես կարմիր
Բանակը հաղթեց և հաստատեց բանվորի ու
գյուղացու իշխանությունը:

Կարմիր Բանակը հաղթեց, վորովհետև ամուր
եր բանվորի և գյուղացու ռազմական միությունն
ընդդեմ կապիտալիստների և կարգածատերերի,
վորովհետև ամեն մի կարմիր-բանակային դիտեր,
թե ինչու համար ե կովում և թե ինչ կպա-
տահի իր և իր տնտեսության հետ, յեթե թշնա-
մին հաղթի: Սպիտակների կողմից ել զինակոչ-
ված գյուղացիները զգում եյին, վոր արդարու-
թյունը կարմիր Բանակի կողմն ե, և անցնում
եյին մեր կողմը:

Այժմ կարմիր Բանակը շաա և ուժեղ: Այս
խաղաղ տարիների ընթացքում մենք կարմիր Բա-
նակը կազմակերպել ենք ինչպես հարկն ե, —
կարմիր-բանակայինի զինավարժություն սովո-
րելու ժամկետը վորոշված ե. մի խոսքով, այժմ

կարմիր Բանակի զորամասերում գոյություն
ունի խստ կարգապահություն և հեղափոխական
դիսցիլինա:

Պատերազմի վտանգը նախատեսելով, շտաբ-
ները զինակոչության նախագիծը վերամշակել
են այնպես, վոր յեթե հայտարարվի զորակոչ
ամեն մի կարմիր-բանակային ու հրամանա-
տար գիտե թե ուր և յե՞րբ պիտի ներկայանա:

Մի խոսքով, բանակում այսպիսի կարգապա-
հություն ե մտցված, վոր յեթե բուրժուազիան
հարձակվի մեր յերկրի վրա, Կարմիր Բանակը
անմիջապես կհավաքի իր զնդերը և դուրս կգա
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միությունը պաշտպանելու:

Այսպիսով մեծ նշանակություն ունի զինա-
կոչման ստույգ և կանոնավոր կատարումը. իսկ
յեթե Խորհրդային Խշխանության զինված ուժը
կամոնավոր կազմակերպված չլիներ, մեր զորա-
կոչը ամիսներ կտևեր, թշնամին կզբակեր մեր
յերկրի մի շոշափելի մասը և շփոթություն կցցեր
մեր շարքերում:

Կարմիր Բանակի ուսուցումը տարվում ե զին-
վորական արվեստի վերջին խոսքով:

Թե կադրային և թե յերկրային զորամասերի
համար մենք ունենք զինվորական գործի ուսուց-
ման կայուն ծրագիր. այնպես վոր Կարմիր Բա-

նակայինի ուշադրությունը չենք զբաղեցնում
ուրիշ խնդիրներով:

Իմպերիալիստական և քաղաքացիական կոփի-
ների ընթացքում զինվորական գործը ուժեղ
թափով առաջ գնաց.—ստեղծվեց նոր ռազմա-
կան կարգ, ռազմիկի վարքի վերաբերյալ նոր
կանոններ են սահմանվել, կատարելագործվել
են հրացանից, պուլեմյուտից և թնդանոթից կրա-
կելու ձեերը:

Կարմիր բանակում այժմ այնպես են սովորե-
ցնում զինվորական գործին, վոր ռազմիկ կար-
միր-բանակայինը գիտենա ներկա կովի բոլոր
յեղանակները:

Ուսուցումն ել չի տարվում հին ձեերով և վոչ
ել հապճեպ, ինչպես քաղաքացիական կոփների
շրջանում. ուսուցումը տարվում ե ծրագրված
և հիմնական կերպով՝ յերկու տարվա դասըն-
թացքներով՝ կաղըային զորամասերի, և հինգ
տարվա դասընթացքներով՝ յերկրային զորամա-
սերի համար: Դպրոցի աշխատանքները դրված
յեն լուրջ հիմունքների վրա:

Զինվորական տեսակետից մեր կարմիր-բա-
նակայինը այժմ ավելի լավ ե պատրաստված քան
քաղաքացիական կոփների շրջանի կարմիր-բանա-
կայինը (ել չենք խսուում հին բանակի զինվորի
մասին):

Մեր կարմիր Բանակը զինվորական գործը
ուսումնասիրում ե այնպես, ինչպես ամենա-
առաջավոր կապիտալիստական յերկրների բա-
նակը, զինվորական գործի ուսումնասիրության
տեսակետից վոչ թե յետ ենք մնացել մեր զբա-
ցիներից, այլև մի քայլ ել առաջ ենք անցել:

Մենք առաջ ենք անցել այն պարզ պատճա-
ռով, վոր մեր կարմիր բանակայինը բանակում
գրագիտություն ե սովորում, գրքեր և լրագրեր
ե կարդում, քաղաքականապես նա ավելի գի-
տակից մարդ ե, հասկանում ե շրջապատի դեպ-
քերն ու անց ու գարձը, իսկ այս բոլորը ողնում
են նրան ուսումնասիրելու զինվորական գործը:

Հայտնի կանոն ե—վորքան տգետ և անդրա-
գետ ե զինվորը, այնքան ել նա վատ ե տիրա-
պետում զինվորական գործին:

Այժմ ապացուցելու համար, ծանոթանանք
կարմիր Բանակի զինվորական ուսուցման զար-
գացման մի քանի թվերի հետ:

Թագնված դիբքերից հրացանաձգության նա-
խապատրաստության համար 1925 թ. պահանջ-
վում եր 1 ժ. 30 րոպե. իսկ այժմ, 27 թվին,
միմիայն 20—25 րոպե յե պահանջվում: Սովո-
րական հրացանաձգության համար 1925 թվին
պահանջվում եր 25—30 րոպե, իսկ այժմ 3—4
րոպե:

Կիյեկի մոտերքում Դնեալը գետի վրա շարժական նավակամուրջ կարմիր-բանակայինները անցկացրին 38 րոպեյի ընթացքում։ Մեր հեռագիր տվողը յերկու տարի սովորելուց հետո մի րոպեյում հեռագրով կարող ե հաղորդել 80 նշան։ մինչդեռ ցարական հեռագիր խփողը յերեք տարի սովորելուց հետո տալիս եր 60 նշան։

Կարմիր բանակի հրամանատարական կազմը, քաղաքացիական կոիվերի շրջանի համեմատությամբ, բոլորովին այլ ե։

Ամենից առաջ մեր բոլոր հրամանատարները նույնպիսի բանվորներ ու գյուղացիներ են, ինչպես և կարմիր բանակայինները. դրա համար ել մեր բանակում չի կարող լինել այն տարբերությունը, վորը կա և անխուսափելի յե կապետալիստական բանակում։ Բուրժուական յերկը ների բանակում զինվորները բանվորների և գյուղացիների զավակներ են, իսկ հրամանատարները՝ ազնվականներ, կապիտալիստներ, կալվածատերեր և կուլակներ են։ Մեզ մոտ կարմիր-բանակայինի և հրամանատարի միջև տարբերություն չկա և դա բաձրացնում ե կարմիր բանակի սաղմական ընդունակությունը։

Իսկ նախկին սպաներից յելած հրամանատարները (նրանց թիվը արդեն քչացել ե) քաղաքացիական կոիվերի և խաղաղ ուսուցման ընթացքում

այնքան ձուլվել են կարմիր Բանակի հետ, վորնրանց և նոր բանվորաւ գյուղացիական հրամանատարների միջև վոչ մի տարբերություն չկա։

Մեր հրամանատարական ամբողջ կազմը վերջացրել ե լավագույն զինվորական դպրոցները, կամ անցել են զինվորական նորմալ դպրոցներ, դասընթացներ, կամ թե այսպէս կոչված կրկնողական դպրոցներ։ Մենք ունենք կարմիր Զինվորական Ակադեմիա, վորը ամեն տարի տալիս ե տասնյակ հրամանատարներ զինվորական բարձրագույն կրթությամբ, —դրանք կարմիր մարշալներ են—բանվորներ և գյուղացիներ, վորոնք շատ վեպքերում հենց կարմիր բանակայինների շարքերից են։

Այսպիսով, մեր կարմիր Բանակը լավ պատրաստված հրամանատարական կազմ ունի. հրամանատարական կազմ, վորը գիտե զեկավարել գորքը կովի նոր ձևերով և վորն անդադար ավելացնում ե իր զինվորական փորձառությունն ու գիտելիքները։

Այնպես վոր մենք համարձակ կերպով մեր հրամանատարական կազմը կարող ենք համեմատել բուրժուական բանակի սպաների հետ, և այդ ասում ենք վոչ թե պարծենալու համար, այլ վոր դա իրողություն ե, դա ճշմարտություն ե։

ՈՐԻՆԱԿ. ԽՈՐԻՐԴային Խշանության հրամանատարին համեմատենք Լեհաստանի սպայի հետ։ Ճիշտ ե, յերկուսն ել զինվորական դպրոց են վերջացրել, զինվորական միատեսակ ծրագրով։ Հիմա յենթադրենք, վոր յերկուսն ել զինվորական տեսակետից միանգամայն հավասար մարդիկ են։

Ի՞նչ առավելություններ ունի լեհական սպան։
Նա ունի այնպիսի «առավելություններ», զոր-
պիսիք չունի բանվորագյուղացիական հրամա-
նատարը, զորն արտաքուստ գուցե և «անվա-
յելուչ» ե, զորի կողմէները փայլվուն կաշուց
չեն. իսկ լեհաստանի սպան ֆռանտ ե, սպի-
տակ ձեռնոցներով, «զուգված-կոկված» ու գիտե-
լավ պարել։

ՄԵԿՔ ԹՈՂՆԵՆՔ այս բոլոր «առավելությունները» լեհական սպաներին, թող վոր նա լինի իր համար թեկուղ ամենագեղեցիկը, բայց վոր նա քաղաքականապես անդրագետ է, դրանում վոչ մի կասկած չկա: Քաղաքական պատրաստականությամբ նա վոչ մի դեպքում չի կարող համեմատվել մեր հրամանատարի հետ (իսկ քաղաքական գրագիտությունը, ո՞հ, դա ներկայումս վորքան անհրաժեշտ է պատերազմի համար):

Լեհական սպան իր զինվորի դասակարգային
թշնամին ե. զինվորն ամենախիստ դիմցիսլլինայի

տակ անգամ, դասակարգային ատելություն և տածում դեպի սպան. լեհական զինվորը նույնպիսի վստահությամբ չի կարող գնալ կռվի, ինչպիսի վստահությամբ մեր կարմիր բանակայինը կերթա իր կարմիր հրամանատարի հետ:

Այսպես ուրեմն, յեթե մենք կշեռքի մի աշքում դնենք լեհական սպայի «առավելությունները», իսկ մյուսում մեր հրամանատարի ունեցածը, մի՞թե պարզ չի լինի, վոր մեզ մոտ հրամանատարական կազմը շատ ավելի լավ է, քան կապիտալիստական բանակում:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ԵԼ ՈՒՆԵՆՔ
ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.

Այսպես, մեր կարմիր բանակը առաջադեմ
բուրժուական յերկրների բանակից պակաս չե-
կազմակերպված և պակաս չե ուսումնասիրած
գինվորական գործը:

Իսկ ի՞նչ գըության մեջ ե զինավորման և
պատերազմի համար տեխնիքական միջոցներ ու-
նենալու գործը:

Ի հարկե, կարիք չկա խոսելու հրացանների, թնդանոթների, պուլեմյոտի, ռումբերի մասին. այս տեսակետից մենք յետ չենք մնում մեր թշրիմիներից (առաջին հերթին՝ մեզ մոտիկ դրացիներից):

Այժմս տեսնենք, թե մեղ մոտ ինչ դրության
մեջ ե ողային նավատորմի գործը։ Այստեղ,
ի հարկե չծածկելով մեր աչքերը իրողության
առաջ, պետք ե ասենք, վոր մենք այս գործում
շատ յետ ենք մնացել կապիտալիստական առա-
ջավոր յերկրներից։ Յետ ենք մնացել նրա հա-
մար, վոր պատերազմի ընթացքում Ռուսաստա-
նում այերոպլաններ չեյին պատրաստվում, իսկ
իմաստական և քաղաքացիական կոփսերը
մաշել եյին յեղած թուչող մեքենաները։ Յեկ քա-
ղաքացիական կոփսերը վերջանալուց հետո մի-
այն, մենք սկսել ենք ձեռնարկել սեփական ողա-
յին նավատորմի արդյունաբերության գործին։
Այս գործը մեղ համար նոր եր. ինձեներներ
և ողային նավատորմի արդյունաբերության
մեջ աշխատող բանվորներ չունեյինք. չկային
նյունպես այերոպլաններ պատրաստելու համար
նյութեր. բայց մենք հաղթանարեցինք բոլոր գլխ-
վարությունները և շատ արագ քայլերով առաջ
ենք գնում։ Այսպես որինակ, մեր գործարան-
ներում այս տարի յերեք անգամ ավելի այերո-
պլաններ են պատրաստված, քան 1923—24 թ.թ.
եյին պատրաստվում, ուրիշ խոսքով, ներկայումս
պատրաստվող այերոպլանների թիվը 1923—24 թ.
համեմատությամբ՝ աճել է 351%-ով։ Ավելի մեծ
հաջողություններ ունենք թուչող մեքենաների

համար մատորներ պատրաստող արդյունաբերու-
թյան գործում։ Մատորաշինաբարական գործա-
րանների արդյունաբերությունը այդ նույն ժա-
մանակամիջոցում ավելացել է 547%-ով. այսպես
որինակ, յեթե մենք 1923—24 թ. պատրաստում
եյինք, յենթաղրենք, 1 մատոր, այս տարի մենք
հնարավորություն ունենք պատրաստելու 547 մա-
տոր։ Խորհրդային ողային նավատորմի հաջողու-
թյունները առանձնապես աչքի ընկան Մոսկա-
յից Պարսկաստան, Թյուրքիայի (Սև Ծովով) և
ամոբողջ Յեվրոպայի վրայով թուչելու ժամա-
նակ։ Պարզվեց, վոր խորհրդային այերոպլանները
վոչ միայն անպետք չեն, այլև շատ դեպքերում
արտասահմանի այերոպլաններից ել լավ են։

1927 թ. հունիսի 18-ի ողային աստղակերպ
թուչքի ժամանակ, Խորհրդային Միության ողա-
յին նավատորմի ողաչուները մեծ հաջողություն-
ներ ունեցան։ Այդ թուչքի նպատակը կայանում
եր հետևյալում։ Խորհրդային Միության զմնազան
ծայրերից (Ռուսով-Դ-ից, Խորկովից, Կիյևից,
Բոբրյուսկից, Կազանից, Լենինգրադից և այլ տե-
ղերից) զինվորական այերոպլանները, վորոշ ծան-
րությամբ բեռնված և առանց ուշադրություն
դարձնելու յեղանակին, սկսած թուչեյին և պիտի
Մոսկվա հասնեյին միևնույն ժամին (յերեկոյան
ժամը 5-ին)։

41722 - 68 + 333

Յեղանակը այդ որը սարսափելի յեր, բայց ողաչուները հաղթահարեցին այդ բոլորը և նշանակված ժամին բոլորը յեղան Մոսկվայում։

Պարզվեց, վոր խորհրդային այերոպալանների աղքարատները թռչելու ընթացքում հաղթահարում եյին ամեն տեսակի արգելքներ, ավելի դիմացկուն են, քան արտասահմանի այերոպալանները (թռչողների մի մասը արտասահմանի այերոպալանների վրա եյին, իսկ մյուս մասը՝ խորհրդային)։ Խորհրդային այերոպալաննինարարության զարգացումը կարմիր Բանակին հասրավորություն տվեց ավելացնել իր ողային տորմիղը։

Յեթե 1920 թ. համար մեր զինվորական ողային տորմիղի քանակը ընդունենք մի միավոր, ապա մեր ողային տորմիղը աճել է հետևյալ ձեռվով. 1921 թ. աճել է $16,4\%$, 1922 թ.— 27% , 1923 թ. աճումը յեղել է $36,4\%$, 1924 թ.— $115,4\%$, 1925 թ. յեղել է 304% , և 1927 թ. $411,6\%$ ։

Այս թվերը կարդալիս ինչն է, վոր աչքի յերնկնում։

Վոչ միայն զինվորական ողային տորմիղի թվերի բարձրանալը, այլև աճման այն թափը, վոր յուրաքանչյուրիս հավատ եներջնչում, վոր մենք վոչ միայն կհասնենք բուրժուական բա-

նակի տորմիղին, այլև առաջ կանցնենք, յեթե կարիք լինի մեր յերկիրը պաշտպանելու համար։

Անգամ հիմա, չնայած մենք վորոշ չափով յետ ենք մնացել, բայց մեր զինվորական ողային տորմիղը ի վիճակի յէ մեր հարեվան ողատորմիղի հարձակումը յէտ մղել, իսկ յեթե մեզ հացողվի յեկու մի խանի տարի խաղաղ ապրելու, մեր ողային զորությունը անհասանելի կլինի թշնամու հավատորմիղի համար։

Ի դեպ, այստեղ հիշենք, վոր մեր անգարային (անգար—մի առանձին շենք ե այերոպալանների համար) հրապարակը 1923—26 թվից, այսինքն յերեք տարվա ընթացքում, $2\frac{1}{2}$ անգամ ավելացել ե։ Այս խաղաղ հանգստյան տարիներում Մոսկվայում կառուցել ենք այսպես կոչված կենտրոնական այերոհիդրոդիմիկական ինստիտուտ։ Առանց այս ինստիտուտի անհնարին ե այերոպալաններ կառուցել, վորովհետև այստեղ փորձվում ե մատորի և այերոպալանի ամրությունն ու դիմացկուն լինելը։

Չնայած մենք աղքատ ենք և տեխնիքապես յետամնաց, բայց այդ ինստիտուտը ամբողջ Յեվրոպայում համարվում ե ամենալավը։

Հետեապես աշխատավորությունը յերեք չպետք ե անհանգստանա մեր ողային ուժերի դրության մասին. մենք առաջ ենք գնում և

առաջիկայում ել առաջ ենք գնալու ու աջակ-
ցելու յենք խորհրդային ողային առմիղի ար-
դյունաբերության զարգացմանը:

Բավական զարգացել ե և քիմյական արդյու-
նաբերությունը. Այս ասպարիզում ևս նախկին
մուսաստանը յեվրոպական պետություններից
ամենից յետամաց յերկիրն եր.—սակայն մենք
քիմյական արդյունաբերությունը վոչ միայն
վերականգնեցինք, հասցնելով մինչ պատերազ-
մյան դրությանը, այլև սկսել ենք քիմյական
մեծ գործարաններ կառուցել:

Ճիշտ ե, մենք այդ գործարանները կառուցել
ենք արդյունաբերության և գյուղատնտեսու-
թյան զանազան ճյուղերի կարիքների համար,
բայց յերբեք չպետք ե մոռանալ, վոր պատե-
րազմի ժամանակ ամեն մի գործարան աշխա-
տում ե յերկրի պաշտպանության համար: Դրա
համար ել քիմյական նոր գործարանները կու-
ժեղացնեն մեր ռազմա-տեխնիքական կարողու-
թյունը: Այս խաղաղ տարիների ընթացքում
մենք բացել ենք քիմյական միջնակարգ և բար-
ձրագույն դպրոցներ: Այդ դպրոցներն արդեն
տալիս են քիմյական արդյունաբերության համար
քիմիկուներ: Պատերազմի ժամանակ բոլոր քիմի-
կուներն ել նույնպես աշխատելու յեն յերկրի
պաշտպանության համար: Վերջապես անհրաժեշտ

ե հիշատակել խորհրդային մի արժեքավոր գյուտի
մասին—հիանալի հակագաղը, վորից յուրաքան-
չյուր կարմիր բանակային արդեն ստացել ե: Հա-
կագաղի արդյունաբերությունը տարեց տարեց ամռի
աճում ե և մենք մտադիր ենք հակագաղով վոչ
միայն բանակը ապահովել, այլ և ազգաբնակչու-
թյունը:

Այսպիսով մենք քիմյական գործի տեսակետից
այնքան ել յետ չենք մնացել, վոր չկարողանանք
պաշտպանվել և մեր ուժերով քշել թշնամուն:

Բանվորա-գյուղացիական իշխանությունը շատ
լավ գիտե քիմյայի գերն ու նշանակությունը
ապագա պատերազմում և ձեռք ե առնում բո-
լոր միջոցները՝ մեր յերկրը ապահովելու համար:

Պետք ե ասել, վոր այս հարցի մասին ման-
րամասն չի կարելի գըել, վորովհետև քիմյական
պաշտպանության շինարարական բոլոր գործերը
շատ գաղտնի աշխատանքներ են: Մենք պետք ե
այս բոլորը գաղտնի պահենք թշնամուց: Բայց
յուրաքանչյուր աշխատավոր պետք ե հիշի հե-
տելյալը—ամեն տեսակ գատարկ խոսակցություն-
ների չպետք ե հավատալ, վոր իբր թե մենի՞ իի-
մյական գագերից յել թշնամու թնդանորներից
յենի կարող պաշտպանվել: Թող փորձեն հարձակ-
վել մեզ վրա, այն ժամանակ բոլորը կհամոզ-
վեն, վոր գագերով մեզ յեն կարող հայրել:

Բանվորա - Գյուղացիական կարմիր Բանակի
բոլոր մասերում կան հատուկ հրամանատար-
ներ, վորոնք սովորում են, թե ինչպես պետք
է յետ մղել քիմյական գրոհը և կամ իրենք
ի՞նչպես պիտի կազմակերպեն այդ ատական
թշնամու վրա: Մեր այերոպլանների ողաչու-
ները սովորում են քիմյական դադերով լեց-
ված ոռոմքեր նետել: Կան զինվորական մասնա-
գիտական դպրոցներ, վորոնք քիմյական գործը
լավ ուսումնասիրած հրամանատարներ են տա-
լիս:

Ահա այս դրության մեջ ե ողային նավա-
տորմի և քիմյայի գործը:

Բայց կարմիր Բանակում կան վոչ միայն ողա-
յին նավատորմի և քիմյական զորամասեր. ամեն
մի քիչ թե շատ խոշոր զորամաս ունի և ուրիշ տեխ-
նիքական մասեր. մենք ունենք այսպես կոչված
ծանր և թեթև արտիլերիա, ինժեներական զորա-
մասեր, վորոնք սովորում են կամուրջներ գցել,
ճանապարհներ, ակոպներ շինել և այլն: Բացի
այս բոլորից, ունենք յերկաթուղային ու ավ-
տոմորիլային զորամասեր և ջոկատներ: Գնդե-
րում կան նաև ավտոմատիկ հրացաններ, վո-
րոնք մի ըոպեյում շատ-շատ են կրակում: Մի
խոսքով, վոչ միայն լավ վարժված ու կազմա-
կերպված հետեւակ ու հեծյալ զորքը դուրս կգա

մեր յերկիրը պաշտպանելու, այլև տեխնիքա-
կան զորամասեր, վորոնք ողային նավատոր-
միղի, քիմյական պայմուցիկ նյութերի, հեռու-
նետող ծանր և թեթև արտիլերիայի ոգնությամբ
կապահովեն վոչ միայն դիրքերում կանգնած հե-
տեակ և հեծյալ զորքին, այլև հաղթական հար-
ձակում կողմէն նրանց վրա, ովքեր կարշավեն
բանվորա-զյուղացիական իշխանության գեմ:

Մեր Յերկրի ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ԱՄՐԱՑՆՈՒՄ Ե
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ
ՀՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ամեն մի կարմիր բանակային, բանվոր և զյու-
ղացի, լսել ե ինդուստրացման մասին, գիտե,
թե ինչ բան ե ինդուստրացումը—դա մեր հիմ-
նական ճանապարհն ե սոցիալիզմին հասնելու
համար: Բայց յերկի ամենքը չե, վոր գիտեն, թե
ինչ նշանակություն ունի ինդուստրացումը կար-
միր բանակի ուղղմական զորությունը ուժեղա-
ցնելու և մեր յերկրի պաշտպանությունը ամ-
րացնելու համար: Իսկ մյուս կողմից ել ԽՍՀՄ
ինդուստրացումը—դա միհնույն ժամանակ մեր
ուղղմական զորության ուժեղացումն ե:

Ինչու:

Ահա թե ինչու:

Ապագա պատերազմը տեխնիքական միջոցների համար (արտիլերիայի, ռումբերի, տանկաների և այլն) հսկայական ծախսեր ե պահանջելու։ Խաղաղ ժամանակում այդ միջոցների համար պատրաստել լրիվ պաշար—դա անհնարին ե, վորովհետև ինչքան ել վոր պատրաստենք, չի բավականացնի։ Դրա համար ել մորիլիզացիոն պաշար պիտի պատրաստվի այնպիսի քանակությամբ, վոր բավականացնի պատերազմի առաջին շրջանում, մինչև վոր մեր արդյունաբերությունը կհարմարեցվի պատերազմական գործին։ Մենք այժմ ել պատրաստում ենք մորիլիզացիոն պաշարներ։ Բայց պատերազմի ընթացքում կարիքները ողիտի հոգա նաև արդյունաբերության այն մասը, վորն այժմ շուկայի համար ե աշխատում։

Վո՞ր արդյունաբերությունն ե, վոր պատերազմի ժամանակ վճռողական նշանակություն ունի։ Արդյունաբերության վո՞ր ճյուղերն են պատրաստելու կովի համար տեխնիքական միջոցներ։ Պարզ ե, վոր առաջին հերթին մետաղի գործարանները, վորոնք արտիլերիայի և մնարիադների համար կարող են տալ յերկաթ և պողպատ։ ալա քիմյական և տրակտորա-շինարարական (տանկաներ պատրաստելու համար) գործարանները։

Հետևապես մեր այդ արդյունաբերությունը

վորքան ուժեղ լինի, այնքան մեր պետությունը ուժեղ կլինի պատերազմի ժամանակ։

Իսկ ի՞նչպես ե գնում մեզ մոտ ինդուստրացման գործը։

Խորհրդային Միության սահմաններում արդեն վերականգնված ու աշխատում են հին ու նոր գործարանները, սկսված ե մի շարք խոշոր գործարանների կառուցումը՝ Ռուբալում և Ռէկրայինայի սահմաններում — Կրիվուզգում կառուցվում են մետաղագործական մեծ գործարաններ։ Մեքենաներ պատրաստող գործարաններ — Ռուսով-Դոնի վրա և Լենինգրադում, տրակտորաշինարարական — Սաալինգրադում և այլն։ Մեր կառավարությունը միևնույն ժամանակ ձեռք ե առնում բոլոր միջոցները՝ ուժեղացնելու և լավացնելու նավթի, քարածուխի և յերկաթահանքերի շահավետ ոգտագործումն, վորովհետև յեթե հարկավոր քանակությամբ վառելանյութեր և հում նյութեր չլինեն, գործարանները չեն կարող անդադար աշխատել։ Կառուցվում են և նոր ելեքտրակայաններ, վորպեսզի արդյունաբերության և գյուղատնտեսության եժան վառելիք և շարժիչ ուժ մատակարարեն։ Ծանր արդյունաբերության բոլոր գործարաններն այժմ աշխատում են մեր յերկրի տնտեսությունը բարձրացնելու համար։ Նոր գործարանները նույնպես

այդ նպատակի համար են աշխատելու. իսկ յեթե
մեզ վրա հարձակվեն, մետաղագործական բոլոր
գործարանները պետք է պատրաստեն յերկաթ
և պողպատ՝ արտիլերիայի համար. Տրակտորա-
շինարարական գործարանները պատրաստում են
տանկաներ, քիմյական գործարանները՝ զագեր
և այլն:

Հետեապես, ամեն մի վերականգնված և նոր
կառուցվող գործարանը ամրացնում է վոչ մի-
այն արդյունաբերությունն ու գյուղատնտեսու-
թյունը, այլ Կարմիր Բանակը:

Ապա հայտնի յե, վոր ինդրուստրացման ոգնու-
թյամբ մենք զարգացնում ենք նաև գյուղա-
տնտեսությունը այն ձեռվ, վոր ամեն մի դե-
սիատին հող ավելի շատ հաց և բուսականու-
թյուն տա. այնպես վոր մեր յերկիրը կհարս-
տանա և մենք ել ավելի շատ պաշար կունենանք:

Վորպեսզի քշենք թշնամուն, պիտի զարգաց-
նենք վոչ միայն արդյունաբերությունը, այլ և
գյուղատնտեսությունը. Դրա համար ել գյուղա-
տնտեսության ինդրուստրացումը ամրապնդում է
կարմիր Բանակի ուազմական զորությունը:

Խորհրդային իշխանությունը ավելի հեշտու-
թյամբ կարող է իր արդյունաբերությունը հար-
մարեցնել պատերազմական դրության, քան կա-
պիալիստական յերկրները, վորովհետ մեր

արդյունաբերությունը պատկանում է պետու-
թյան և պետությունն ել ղեկավարում է այդ
արդյունաբերությունը, հետեապես կարող է իս-
կույն մորիլիգացիայի յենթարկել: Իսկ կապի-
տալիստների մոտ արդյունաբերության ղեկավա-
րությունը ջոկ-ջոկ է, ցաք ու ցըիվ և ամբող-
ջությամբ չի յենթարկվում պետության, ինչ-
պես մեզ մոտ Բացի դրանից, Արևմտյան Յեփ-
րոպայի հիմնարկների բանվորները—յեթե կա-
պիտալիստները պատերազմել սկսեն մեզ հետ-
գործադուլ են՝ անելու, հրաժարվելու յեն Խոր-
հրդային իշխանության դեմ պատերազմի հա-
մար աշխատելուց, և նրանց արդյունաբերու-
թյունը քայլայվելու յե:

Իսկ մեզ մոտ բանվոր դասակարգը ինչպես
մի մարդ, կուրծքը դեմ է տալու Խորհրդային
Իշխանության պաշտպանության համար:

Յեկ իսկապես, «սատանան այնքան ել սար-
սափելի չե, ինչպես պատկերացնում են նրան»:
Մենք այնքան ուժեղ ենք, վոր կարող ենք հաղ-
թել մեզ վրա հարձակվողներին:

Մեր Կարմիր Բանակի ուազմական ու տեխնի-
խական զորության մասին վոյ մի կասկած յի
կարող լինել: Նա լավ կազմակերպված է, տառ-
ցումը տարվում է վերջին պատերազմների փոր-
ձառության համաձայն, իրամանատարական

կազմը զինվորական գործը հրաշալի զիսէ, ողացին և ավատումիլը յեվ իիմյան անում են. իսկ Խորհրդային Սոց. Հանրապետությունների Միության ինդուստրացումն ամրացնում է Կարմիր Բանակի գորությունը:

ՄԵՔԵՆԱՅԻ ՅԵՎ ՄԱՐԴՈՒ ԴԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ.

Վորպեսպի մեքենան բանի, պետք ե վոր մարդը նրան ղեկավարի:

Ճիշտ այդպես ե և յուրաքանչյուր զինվորական «մեքենան»—լինի դա հրացան, թնդանոթ, կամ գաղով լեցված ուռմբ—դա միմնույն ե—նրանք առանց մարդու չեն կարող աշխատել: Դրա համար բավական չե միայն, վոր բանակը կովելու համար ունենա տեխնիքական միջոցներ, վոտից-գլուխ զինված լինի: Բանակի և զինված լինելը և տեխնիկան միայն այն ժամանակ կարող են նշանակություն ունենալ, յեթե բանակի զինվորների սիրու լեցված ե պատերազմելու և հաղթելու բուռն ցանկությամբ:

Վորպեսպի ամեն մի բանակ անհաղթելի լինի, բավական չե միայն, վոր նա լավ կազմակերպված լինի, ուժեղ տեխնիկա ունենա կամ ուսուցումը լավ հիմքերի վրա դրված լինի:

Հարկավոր ե, ինչպես ասում են, վոր բանակը մի գաղափար ունենա, այսինքն, վոր իմանա

թե ինչու և ինչ նպատակի համար նա ստիպված ե կովել: Ինչպես ընկ. Լենինն ե ասել՝ պրուսական մի թագավոր 18-րդ դարում իզուր չե վոր մի «խելոք միտք» ե հայտնել—«յեթե մեր զինվորները իմանային, թե ինչու համար են պատերազմում, այն ժամանակ յերբեք չելինք պատերազմիլ»:

Ընկեր Լենինն ասում եր—պրուսական այդ ծեր միապետը հիմար մարդ չի յեղել:

Ի՞նչո՞ւ:

Հենց այն պատճառով, վոր բուրժուազիան բանակ ե պահում միայն նրա համար, վորպեսպի իր իշխանությունը ապահովի, վորպեսպի զինվորները պաշտպանեն կալվածատերերի և կապիտալիստների սեփականությունը, վորպեսպի ինքը թալանի գաղութները, դիզի թալանից հավաքած փողերը, վորպեսպի խեղդի աշխատանքի համրապետությունը—Խ. Ս. Հ. Մ. և վորպեսպի զինվորները իրենց կյանքով և արյունով ապահովեն հետագա թալանն ու աշխատավորության ստրկացումը: Բուրժուազիան իհարկե կզնդականարի այն բանվորներին և գյուղացիներին, վորոնք կապստամբեն կապիտալիստների ու կալվածատերերի դեմ. բուրժուազիան անում ե ամեն ինչ, վորպեսպի զինվորներից թագյնի, թե ինչ նպատակների համար են կապիտալիստական պետությունները զորք պահում:

ՅԵԺԵ բուրժուական բանակի զինվորները գիտակցելին այդ կովկի նպատակը, նըանք իհարկե զենքը կդարձնելին իրենց հարստահարողների ու շահագործողների դեմ: Ճիշտ այնպես, ինչպես 1917 թվի հոկտեմբերին սուսական բանակը շտիկները շուռ տվեց իրենց կալվածատերերի ու կապիտալիստների դեմ: Բուրժուազիան զինվորներին խարելու համար՝ տերտերներին ուղարկում ե գնդերը, վոր վերջիններս աստուծուանունով խարեն մասսաներին: Բուրժուազիան մահվան պատիժ ե տալիս այն զինվորներին, վորոնք բռնում են բուրժուազիայի խարերայությունները, զինվորներն ել սկսում են պայքարել իրենց հարստահարողների դեմ: Բուրժուազիան իր զինվորների մեջ մտցրել ե ամենակուղիտ դիսցիպլինա. անգամ մարմնական պատիժներ ե տալիս, վորպեսզի վախեցնի, մթագնի զինվորական մասսաների գիտակցությունը:

Կասկածից դուրս ե, վոր բուրժուազիան իր բանակը մեր դեմ ե ուղարկելու այն պատրվակով, վոր իբր թե, տեսեք հա՝ «բարեարոս բոյլշկիներն ուղում են կործանել մեր հայրենիքը և քաղաքակրթությունը: Տերտերներն ել կոչ են անում զինվորներին հանուն աստուծու կովել կարմիր Բանակի դեմ:»

Սակայն շատ դժբար ե Խորհրդային Սոցիա-

լիստական հանրապետության և կարմիր Բանակի դեմ կովել և հաջողություն ունենալ: Ամենից առաջ վոչ միայն մեր, այլև արտասահմանի աշխատավորությանը հայտնի յէ, վոր Խորհրդային Միությունը իսկապես խաղաղության քաղաքականություն ե վարում և մտադիր չե վոչ վոքի վրա հարձակվել: Դժվար կլինի կեհաստանի ու Ռումինիայի զինվորին համոզել, վոր ԽՍՀՄ իսկապես հարձակվում ե: Ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները գիտեն մեր պետության արդարացի լինելու մասին և հիմա արտասահմանում դժվար թե գտնվի մի աշխատավոր, վորը հավատա ԽՍՀՄ մասին տարածվող բուրժուական կեղծիքներին: Յերրորդ. — մեր դեմ կովի յեխող զինվորներին մենք կպատմենք, վոր նըանք կովելով բանվորա-գյուղացիական իշխանության դեմ (վորը քշել ե կալվածատերերին-կապիտալիստներին ու նոր կյանք ե կառուցում) — դրանով ձրանի վոյ թե «հայրեմիի» են պաշտանում, այլ կարվածահրական հողահրությունը, կապիտալիստական սեփականությունը, յեվ վոր դրանով նրանի պաշտպանում են իրենց իսկ տապանին ու սրկությունը:

Անգլիացիները, ֆրանսիացիները, ուսմանացիները, հույները, գերմանացիները — սրանք բոլորը 1919 թ. յեղել են մեզ մոտ: Յեվ ի՞նչ.

նրանց զինվորները շուտով հըաժարվեցին կըուվելու կարմիր բանակի դեմ, վորովհետև կարճ ժամանակում նրանք համոզվեցին, վոր կարմիր բանակը նաև նրանց շահերն եւ պաշտպանում:

Ամբողջ աշխարհի աշխատավորության վրա մեր հեղափոխությունը մեծ ազդեցություն է ունեցել. լուսավորել եւ հարյուր-միլիոնավոր նոր բանվորների: Բուրժուազիան ամենահեշտավոր միջոցներով ուզում եւ խեղդել իր յերկրի աշխատավորության հեղափոխական շարժումները: Բոլոր յերկրների բանվորներն ու գյուղացիները, հուսով և ուրախությամբ հետեւու յեն մեր աշխատանքներին ու մեր տնտեսական հաջողություններին: Յեվ յեթե բուրժուազիան կոչ անի աշխատավորությանը մեր դեմ կռվելու համար, — չնայած գնդակահարություններին, մտրակելուն ու բանդ նստեցնելուն — զինվորները գիտակցելու յեն, վոր նրանի կովեցու վոյինչ չունեն, վոր ԽՍՀՄ վրա հարձակվելով, նրանի իրենց շահերի դեմ են զնում:

Հավանական եւ, վոր բուրժուազիային հաջողվի առաջին շրջանում նրանցից շատերին խաբել: Հավանական եւ, վոր զինվորներից վոմանք համոզված են լինելու, վոր կարսիր բանակի դեմ կռվելը արդար գործ եւ: Բայց վաղ թե ուշ նրանց դասակարգային գիտակցությունը կզար-

թնի: Յեվ այն ժամանակ պատերազմական մեռքենան կամ միանգամից կդադարի գործելուց, կամ զինվորները հրացանները կդարձնեն իրենց շահագործողների դեմ:

Վաղ թե ուշ զինվորները կհասկանան, թե բուրժուազիան ինչու համար եւ կովում և այն ժամանակ, ինչպես պրուսական թագավորն եւ ասել՝ «Եւ անկարելի կլինի պատերազմել»:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ ԳԻՏԵ, ԹԵ ՆԱ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ և ԹԵ ՆԱ ԻՆՉ Ե ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ

Մեր կարմիր բանակը զիտե, թե ինչու համար ե նա ուսումնասիրում զինվորական գործը և կապիտալիստների դեմ պատերազմ լինելու գեղգում ինչ պիտի նա պաշտպանի:

Մեր բանվորա-Գյուղացիական կարմիր բանակը զիտե և տեսնում ե, վոր Խորհրդային իշխանությունը տարել ե, տանում եւ և տանելու յեխաղաղության քաղաքականություն, և վոր կառավարությունը՝ ինչ վոր իրենից կախված ե, անելու յեւ խաղաղություն պահպանելու համար:

Չնայած իմպերիալիստների ամեն տեսակի պրովակացիային, կեղծիքներին, մեր ներկայացուցիչներին սպանելուն, բայց և այնպես, Խորհրդային իշխանությունը ուշի ուշով հետեւում ե

խաղաղության և ուղում ե ապահովել յերկրի
սոցիալիստական շինարարությունը:

Բանվորներն ու զյուղացիներն այս բոլոր
իմանալով, ավելի մեծ կատադրյամբ պիտի
կռվեն նրանց դեմ, ովքեր խաղաղություն չեն
ուզում, ում ձեռնույն յէ, ում վճառակար ե մեր
ժամանական հաջողություններն յեվ բաղաժական
ու կուլտուրական շինարարությունը:

Կարմիր Բանակը գիտե, վոր իմպերիալիստ-
ները ցանկանում են, վորպեսզի մենք վճա-
րենք ուստական թագավորի 30 միլիարդ ոռոք-
լու պարտքը: Ոտարյերկրյա իմպերիալիստները
ուզում են, վոր մենք վերադարձնենք իրենց
պատկանելիք Դոնի ածուխի ավազանը, Կրիվո-
ռոգի հանքերը, Բագվի նավթը, Ուկրայինայի,
Վոլգայի ափերի և Սիբիրի նացը: Նրանք ուզում են
գյուղացու զղին փաթաթել հին կալվածատերե-
րին, վորպես զի՞նրանք ոգնեն իմպերիալիստներին՝
բանվորներին և գյուղացիներին թալանելու գոր-
ծում: Կարմիր-բանակայինը գիտեն, վոր իմպե-
րիալիստները ցանկանում են Խորհուրդների յեր-
կիրը դարձնել իրենց գաղութը, իսկ Խորհրդա-
յին Սոցիալիստական Հանրապետությունների
Միության ժողովուրդներին— իրենց ճորտերը:
Կարմիր-բանակայինը գիտե, վոր ոտարյերկրյա
կապիտալիստների հետ մեկտեղ մեր յերկիրն են

մտնելու կալվածատերերն ու գործարանատերե-
րը, գեներալներն ու վոստիկանները և այլն. մի
խոսքով այն բոլորը, վորոնց Հոկտեմբերյան Հե-
ղափոխությունն ու Կարմիր Բանակը իր հերոսա-
կան կոփմերում ցախավելով արբել են մեր
յերկրից:

Կարմիր - բանակայինը յերբեք չի ցանկանա
վերադարձնել ոտարյերկրյա իմպերիալիստներին
և ուստական կալվածատերերին այն ամենը, վո-
րի համար նրա մեծ ընկերները կռվել են, քա-
ղաքացիական կոփմերի ընթացքում տարել են
ամեն տեսակի զրկանք, քաղց, հիվանդություն,
վորի համար ել նրանք մեռել են:

Կարմիր բանակայինը զիտե, թե ի՞նչու համար
առ պետք է կռվի: Պատերազմական մեթեաման նրա
ձեռնին ավելի շավ պիտի աշխատի, յան կապի-
տականական բանակի զինվորի ձեռնին:

ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱ-
ԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԿՆԱՊԱՏԿՈՒՄ Ե ԿԱՐՄԻՐ-
ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարմիր-բանակայինը միայն զինվորական գոր-
ծը չե, վոր ուսումնամիրում ե:

Կարմիր զորանոցներում նա դաստիարակվում
ե վորպես Խորհրդային պետության գիտակից
քաղաքացի, նա հասկանում ե շրջապատի անց

ու դարձը, գիտե թե ինչո՞ւ համար բանվորներն ու գյուղացիները իշխանությունը իրենց ձեռքը վերցրին, գիտե թե այդ իշխանությունը ի՞նչ-պես և կազմակերպվում, ի՞նչպիսի քաղաքականություն և վարում, ի՞նչ նպատակի յեն ձըգտում բանվորներն ու գյուղացիներն, ովքեր են մեր պետության թշնամիները, ինչո՞ւ յեն իմպերիալիստները մեզ ատում, թշնամու բանակից ո՞վքեր են ԽԾՄ բարեկամները և այլն:

Այսպիսի գաստիարակությունը հնարավորություն և տալիս կարմիր բանակայինին սպարզ գիտակցելու իր անելիքները Խորհրդային պետության մեջ և կարմիր Բանակում: Նա հասկանում է, թե ի՞նչ ինդիրներ են դրված աշխատավորության առաջ և ըմբռնում են մեր թշնամիների ամեն տեսակի մութ զավագրությունները: Կարմիր բանակայինը կարդում ե լրագրեր, գրքեր և աշխատում ե մի շարք խմբակներում (զինվորական, քաղաքական, ինքնազարգացման, սպորտի և այլն). Զինվորական ծառայությունից նա վերադառնում ե գյուղը, վորպես խորհրդական մի առաջամեմ քաղաքացի: Կարմիր բանակայինը տեմնում է, վոր կոմունիստական կուսակցությունը աշխատավորության միակ կուսակցությունն է, վորը ազատադրեց բանվորներին և գյուղացիներին ամեն տեսակի հալածանքից, աղ-

քատությունից, անգրագիտությունից, տգիտությունից: Յեկ դրա համար ել նա մտնում է կուսակցության և կոմյերիտամիության շարքերը: Այսպես որինակ՝ 1902 թ. զորակոչայիններից կարմիր Բանակ եյին յեկել չորս և կես հազար կոմյերիտականներ, իսկ բանակից դուրս յեկան—քսան հազար: Դա նշանակում է, վոր այդ զորակոչայիններից 15 հազար կարմիրբանակայիններ մտան կոմսոմոլի շարքերը: Այդ նույն զորակոչայիններից կարմիր Բանակ եյին յեկել կուսակցության անդամներ՝ 20 հազար, իսկ բանակից տուն վերադարձան 50 հազար կուսակցության անդամներ և թեկնածուներ: Ուրեմն, 1902 թվի զորակոչայիններից բանվորացյուղացիական կարմիր Բանակում 30 հազար կարմիր բանակայիններ անցել են կուսակցության շարքերը:

Մեր կարմիր բանակայինը մասնակցում է յերկրի կառավարման գործին՝ իր պատգամավորին ուղարկելով բանվորացյուղացիական և կարմիր բանակայինների պատգամավորական խորհուրդ: Դրա համար ել կարմիր բանակայինը տեղյակ և մեր յերկրի քաղաքական կյանքին:

Կարմիր Բանակի քաղաքական գիտակցությունը կրկնապատկում է նրա ուսպմական զորությունը, վորովհետև գրագետ և քաղաքական պատրաստականություն ունեցող զինվորը ավելի լավ

Ե հասկանում զինվորական գործը։ Քաղաքականապես պատրաստված կարմիր բանակայինը ավելի համարձակ ու վճռողական ե լինում։ Կոխվաներում յերբեք չի կորչի և հաստատ քայլերով առաջ կերթա։

Մեր կարմիր բանակայինը «անբան անասուն» չե, ինչպես սպաներն եյին անվանում ցարական բանակի զինվորներին, և վոչ ել բուրժուական բանակի զինվոր, վորը խաբված ե տերտերների, կալվածատերերի և սպաների կողմից։ Կարմիր բանակայինը Խորհրդային պետության գիտակից ուղղմագետ-քաղաքացի յե, վորը վոչ միայն գիտե թե ի՞նչպես պետք ե կրակել, այլև ո՞ւմ վրա և ինչո՞ւ պետք ե կրակել։ Իսկ մեր բանակը, ինչպես ընկ. Լենինն ե ասել, վոր «պատության մեջ առաջին անգամն ե իմանում, թե իմյո՞ւ համար ե նա կովում յեվ իմյո՞ւ համար ե զոհվութ—այդպիսի բանակը անհաղթելի յե»։

ՀՐԱՄԱՆԱՑԱՐԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ—
ԴԱՍԱԿԱՐԳՎԱՅԻՆ ՅԵՂԱՅՐՆԵՐ ԵՆ

Մենք արգեն ասացինք, թե ինչո՞ւմն ե տարբերությունը բանվորա-գյուղացիական հրամանատարական կազմի և բուրժուական բանակի սպաների միջն։ Ասացինք, թե ի՞նչ նշանակություն ունի այդ տարբերությունը բանվորա-գյուղացի-

ական կարմիր Բանակի և այլ բանակների ռազմա-ընդունակությունների համար։

Ցեվ իսկապես։ Միթե Լենաստանի զինվորը, վորն հողագուրկ գյուղացի յե (Լենաստանում 4—4½ միլիոն հողագուրկ գյուղացիներ կան), կարող ե վստահություն ունենալ դեպի լեհական սպա-կալվածատերը (Լենաստանում ամբողջ հողի 37,4% պատկանում է մի խումբ կալվածատերերին)։ Միթե Բելոռուսիայի զինվորի մեջ կարող ե վորեւ վստահություն և նվիրվածություն լինել դեպի լեհական սպա-կալվածատերը, վորը Բելոռուսիայի աշխատավորությանը շահագործում ե։

Դեռ չենք ասում Ռումինիայի սպաների մասին. վոչ մի միաբանություն չի կարող լինել Ռումինիայի, Բեսարաբիայի գյուղացի-զինվորների և Ռումինիայի ազնվականների, սպեկուլյանտների ու կալվածատերերի միջև, վորոնք գընդակահարում են Բեսարաբիայի, Բուլղարիայի և Ռումինիայի գյուղացիներին։

Կալվածատեր-սպան, կապիտալիստ-սպան չի կարող վստահություն ունենալ դեպի զինվորը, վորովհետեւ նըանք գիտեն, վոր գյուղացիները ուղում են խել նրա հողը, և վոր գյուղացիները կալվածատիրությունը համարում են մի չարիք, վորի դեմ սլիտի կովել։

Սպան ամենաստոր վերաբերմունք ե ցույց

տալիս զինվորին: Լեհական և Ռումինական բանակներում ծեծն ու հայհոյանքը սովորական բաներ են: Յեկ ուրիշ կերպ ել չեր կարող լինել: Զինվորը ամբողջ հոգով առում ե սպային, իսկ վերջինս զգում ե այդ ատելությունը, վախենում ե դրանից և հայհոյանք, բնություն ու բռնցք ե ցույց տալիս:

Կարմիր Բանակում հրամանատարական կազմի և կարմիր բանակայինների միջև չի կարող լինել դասակարգային և ազգային վոչ մի ատելություն: Կարմիր Բանակը աշխատավորության միասնական ընտանիքն ե, վորտեղ ավելի գրագետները և զինվորական պատրաստականություն ունեցողները նշանակել են հրամանատարներ: Ամեն մի կարմիր բանակային, սովորելուց հետո, կարող ել լինել ավելի մեծ աստիճան ունեցող հրամանատար, և մեր զինվորական դպրոցի դռները բաց են բոլոր աշխատավորության առաջ:

Դրա համար ել, Կարմիր Բանակը ձեռփ-ձեռփի սված միահամուռ ուժերով կովելու յե ընդհանուր թշնամու դեմ:

Հրամանատարն յեվ կարմիր բանակայինը դասակարգային յեղբայթեր են, յեվ դա մեծ ուժ և Կարմիր Բանակի համար:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ—ԲՈԼՈՐ ՍԶԳՈՒԹՑՈՒՆԵՐԻ
ԶԻՆՎԱԾ ՄԻՈՒԹՑՈՒՆ Ե.

Ամեն մի բանակ ունի հատկանիշներն այն պետության, վորի մոտ նա ծառայում է: Մեր հանրապետությունը կամավոր միություն ե բոլոր այն ազգությունների, վորոնք բնակվում են ԽՍՀՄ սահմաններում: Մեզ մոտ գոյություն չունի ազգային ատելություն. ոռւս, ուկրայնացի, հայ, կիրդեզ, վրացի, թուրք, թաթար բանվորներն ու զյուղացիները մեզ մոտ հավասար են:

Պատերազմի ժամանակ ամեն մի ազգության կարմիր-բանակայինը գիտակցելու յե, վոր նա վոչ միայն իր հողն ե պաշտպանելու, այլև իր ազգության ազատ զարգանալու իրավունքը:

Բոլորովին այլ ե Լեհաստանում և Ռումինիայում: Այնուեղ բացի դասակարգային ատելությունից կա նաև ազգայնական հարստահարություն: Ուկրայինայի և Բելոռուսիայի գյուղացիները լեհական բանակում, ինչպես և Բելոռուսիայի և Բուկովինայի գյուղացիները Ռումինական բանակում՝ վոչ մի շահ չունեն կռվելու համար: Վաղ թե ուշ, նրանք գիտակցելու յեն, վոր կրովելով ԽՍՀՄ դեմ, դրանով նրանք իրենց ազգության ազատ զարգացման դեմ են գնալու:

Այս բոլորը զայիս են ասելու, վոր Կարմիր
Բանակը անհաղթելի կղիմի:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ և ԱՇԽԱՏԱՎՈՐ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԵԿ ԸՆՏԱՆԻՔ են.

Բուրժուական պետություններում բանվորներին ու գյուղացիներին թույլ չեն տալիս անգամ զորանոցների մոտով անցնելու: Բուրժուազիան վախենում ե, վոր չլինի՛ թե զինվորները աշխատավորության հետ «կապ» հաստատեն և դուրս գան բուրժուական պետության դեմ: Աշխատավորական մասսան բանակի վրա նայում ե, վորպես կալվածատերերի և կապիտալիստների ձեռքում գտնված զենքի վրա: Լեհաստանի, Ռումինիայի և ուրիշ յերկրների հողազուրկ գյուղացիները ամեն անդամ զինվորների շարքերը տեսնելով, ասում են—յեթե չլիներ բանակը, իրենք դուրս կքշեցին կալվածատերերին իրենց գյուղից և հողն ու կարողությունը կվերցնելին իրենց և իրենց նման հողազուրկ գյուղացիների համար: Ռումինիայի գյուղացիները, վորոնք մի քանի անգամ ապստամբել են ուռմինական ազնվական-հարստանարողների դեմ, գիտեն, վոր ուռմինական բանակը իրենց ազատագրության թշնամի յե մինչ այս ժամանակ, քանի դեռ զինվորները

սպաների աղջեցության տակ են ու նրանց են լուսմ:

Այդպես չե մեզ մոտ, Կարմիր Բանակում՝ Բանվորներն ու գյուղացիները կազմակերպված հաճախում են զորանոցներն ու ճամբարները—ծանոթանում կարմիր բանակայինի զինավարժության ու կյանքի հետ և հանձինս Կարմիր Բանակի, նրանք տեսնում են իրենց զինված պաշտպանությունը: Բանվորներն ու գյուղացիները կարմիր Բանակի շեֆն են, մտածում են կարմիր բանակայինի կուլտուրական պահանջների մասին, նրանց հետ միասին ժողովներ են անում, անց են կացնում զանազան տոներ, խաղեր, զվարճանքներ և այլն: ԽՍՀՄ աշխատավորությունը և կարմիր Բանակը մի ընտանիք են կազմում: Մեզ մոտ վորևե անհամերաշխության նշույլ անգամ չկա ազգաբնակչության և կարմիր Բանակի միջև:

Պատերազմի ժամանակ հաղթության գլխավոր պայմաններից մեկն ել այն ե, թե ազգաբնակչությունը ի՞նչ ձեռով կաջակցի բանակին: Բոլորովին այլ բան ե, յեթե գյուղը փոխանակ սիրով դիմավորելու զինվորական մասերին, սկսի կրակել նրանց վրա (ինչպես գիմավորում եյին սպիտակ զվարդիականներին), և միանգամայն ուրիշ բան ե, յերբ զինվորական մասերը վորևե բնա-

կավայր մտնելիս՝ ազգաբնակչությունը սիրով եղի-
մավորում և մինչև անդամ հյուրասիրում են նրանց:

Առաջին դեպքում կարմիր բանակայինը կզգա,
վոր շրջապատված ե թշնամիներով, իսկ յերկ-
րորդ դեպքում՝ նա կզգա, վոր իրեն ոգնում ու
աջակցում են:

ԽՍՀՄ աշխատավորության ունեցած սերը
դեպի կարմիր Բանակը, հավատ ե ներշնչում
կարմիր բանակայինին, վոր իր տարած աշխա-
տանքը արդար գործ ե և դրա համար ել նա քա-
ջաբար բռնում ե և շարունակելու յե իր ձեռքում
ամուր բռնել հրացանը:

ՄԵՆՔ ՄԵՆԱԿ ԶԵՆՔ. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱ-
ՆՈՐ ԽՄԲԵՐ ԵՆ ԳԱԼԻՍ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԵՄ
ԿՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Իմպերիալիստները վաղուց արդեն հարձակ-
ված կլինելին մեզ վրա, յեթե իրենց ույժերի
վրա վստահ լինելին:

Մեր դեմ կռվելու համար միլիոնավոր մարդիկ
են հարկավոր, իսկ ուղարկել միլիոնավոր մարդ-
կանց ԽՍՀՄ դեմ, դա դժվար գործ է: Իմպե-
րիալիստները վախենում են, չինի՞թե այդ մի-
լիոնները շտիկները դարձնեն նրանց դեմ: Ճիշտ ե,
իմպերիալիստները գործադրում են ամեն տեսակի
միջոցներ, վորպեսզի միլիոնները պատերազմի

դուրս գան: Ամեն տեղ բանվորների վրա յեն
արշավում: Բուրժուազիան լեհաստանում ջախ-
ջախում ե բանվորա-գյուղացիական կազմակեր-
պությունները. աշխատավորության հազարավոր
լավագույն դեկավարները բանտերում են նստած.
մեր թշնամիները ամեն տեսակի լուրեր են տա-
րածում ԽՍՀՄ մասին: Անգլիայում և կապի-
տալիստական այլ յերկրներում նույնպես ձեր-
բակալում են հեղափոխական բանվորների դեկա-
վարներին և կատաղի պայքար են մղում բան-
վորական կազմակերպությունների դեմ:

Իմպերիալիստները ցանկանում են խեղդել ա-
մեն աեսակի հեղափոխական ցույցեր, վորպեսզի
մեր դեմ արշավանք կազմակերպեն:

Այդ ուժեղ արշավանքը իրենց յերկրի աշխատա-
վորների դեմ գալիս ե հաստատելու, վոր հեղա-
փոխական շարժումը աճում ե և վոր մեր սկը-
սած պայքարը շարունակում են բանվորներն ու
գյուղացիները կապիտալիստական բանակում: Կա-
պիտալիստական յերկրների բանվորներն ու գյու-
ղացիները նույնպես կռվելու յեն այն գործի հա-
մար, վորն հիմա կարմիր Բանակն ե պաշտպա-
նում: Դա հաստատում ե թեկուզ չինական հե-
ղափոխությունը:

Զնայած իմպերիալիստները Զինաստան ուղար-
կեցին տանկաներ, այերոպլաններ, զրահակիր նա-

վեր և զինվորներ, չնայած շինացի մի քանի գեներալների դավաճանության, բայց և այնպես հեղափոխությունը առաջ է ընթանում:

Չնայած իմպերիալիզմը պայքարի համար ունի բավական տեխնիքական և դրամական միջոցներ, բայց նա դժվարանում է դիմադրել չինական հեղափոխության:

Վերջերս Վեննայի բանվորների ըմբոստությունը ցույց տվեց, վոր իմպերիալիստները նստած են հրաբուխի վրա:

Իմպերիալիստները այլևս անզոր են ԽՍՀՄ հետ «հաշիվ տեսնելու», այնպես, ինչպես իրենք կուղենային:

Ամբողջ աշխարհի հարստահարված աշխատավորությունը, վոր գուրս և յեկել պայքարելու իմպերիալիզմի դեմ, հանձինս ԽՍՀՄ տեսնում և իր պաշտպանին, ղեկավարին և ուսուցչին, իսկ հանձինս կարմիր բանակի նա տեսնում է զինված պաշտպանություն այն յերկրի, վորը միջաղգային հեղափոխության պաշտպանն ու թիկունքն ե:

Այդ իսկ պատճենով ԽՍՀ Միուրյունը յել Կարմիր Բանակը մենակ յեմ. քննա՞լու բանակում նրանք ունեն բարեկամներ յել դաշնակիցներ՝ հանձինս բոլոր աշխատավորների յել հարստահարվածների. իսկ դա վեցրին հաշվով ապահովում է մեր հաղորդությունը:

ՑԱՆԿ

Մեր քենամիներն այնքան ել ուժեղ չեն. մենի այնքան ել բույլ չենք	3
Կարմիր Բանակը կազմակերպված ե յեվ զինվորական գործք ուսումնասիրում ե զիտուրյան վերջին մերողներով	7
Պատերազմի համար մենք յեվս ունենք տեխնիքական միջոցներ	15
Մեր յերկրի ինդուստրացումը ամերացնում ե Կարմիր Բանակի ռազմական զորությունը յեվ ԽՍՀՄ պատասխանական ընդունակությունը	23
Մենենայի յեվ մարդու դերը պատերազմում	28
Կարմիր Բանակը զիտե, թե ինչո՞ւ համար նա պիտի պատերազմի յեվ թե նա ի՞նչ է պատասխելու	33
Կարմիր բանակայինի բաղաբական պատրաստականությունը կրկնապատկում ե Կարմիր Բանակի ռազմական զորությունը	35
Հրամանատարն յեվ կարմիր բանակայինը դասակարգային յեղբայրներ են	38
Կարմիր Բանակը—բոլոր ազգությունների զինված միությունն ե	41
Կարմիր Բանակը յեվ աշխատավոր բնակչությունը—մեկ ընտանիք են	43
Մենք մենակ չենք: Աշխատավորության նորանոր խրմեր են զալիս իմպերիալիզմի դեմ կռվելու համար	44

ՊԱՀԱՆՁԵՑԵՎ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԳՐԲԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ,
ՎՈՐ ՈՒՎՈՐԿՎՈՒՄ Ե ԶԲԻ:

ԴԻՄԵԼ Մոսկվա, Никольская 10.
ЦЕНТРИЗДАТ.



ԳԻՒԸ 15 ԿՈՎ.

40.800

24099



ЗОРИН.

**В чем сила
Красной Армии**

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва

Нионольская, 10.